ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

02.12.21թ քՐ. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Հ. Մարգարյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Ուլիխանյանը, Ա. Եգանյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ա. Եսայանը, Հ. Սանթրոսյանը, Ա. Բարսեղյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն է Գ. Ավետիսյան, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Օրակարգ

1. 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում /Զեկ. Գ. Ավետիսյան/;
2. 2020-2021 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների բաշխված ցանկի հաստատում /Զեկ Գ. Հովհաննիսյան, Մ. Միքայելյան/:
3. Հաղորդում 1-ին կիսամյակում նախատեսված հետազոտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ /Զեկ Գ. Հովհաննիսյան, Մ. Միքայելյան/:
4. Ուսանողի կրթական կարիքների վերհանման հարցերով քննարկում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
5. Հաղորդում առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների և ժամանակացույցերի հաստատման մասին/ Զեկ. Գ.Ավետիսյան/:
6. Առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատում/ Զեկ. Ավետիսյան/:
7. Ընթացիկ հարցեր

7.1. Հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների քննարկում /Զեկ Գ. Հովհաննիսյան, Մ. Միքայելյան, Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

Բաց քվեարկությամբ 12 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում 4/1

¬ Հաստատել նիստի օրակարգը։

1. Լսեցին.- 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփման մասին/Զեկ. Գ. Ավետիսյան/։

Գ. Ավետիսյանը հաղորդեց 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների մասին։ Նա նշեց, որ ֆակուլտետում սովորում է 134 ուսանող, «Ֆինանսներ» ԿԾ՝ 77, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 57:

Գ. Ավետիսյանը նշեց, որ 2021-22 ուստարավա 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները կազմակերպվել են առկա՝ ՈՒՄՎ կողմից սահմանված ժամկետում /ս/թ հոկտեմբերի 26-29/: Ֆակուլտետում կազմակերպվել են 21 ընթացիկ ստուգում և 18 ընթացիկ քննություն: Մասնավորապես «Ֆինանսներ» ԿԾ կուրսերում /1-4-րդ/ 7 ընթացիկ ստուգում, 11 ընթացիկ քննություն, իսկ «Զբոսաշրջություն» ԿԾ կուրսերում /1-4-րդ/ 14 ընթացիկ ստուգում, 7 ընթացիկ քննություն: Համապատասխան մասնագիտական ամբիոնները նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետներում պահանջել և ստացել են տոմսերը, թեստերը: 5 ընթացիկ քննություն և 2 ընթացիկ ստուգում կազմակերպվել են համապատասխան ամբիոնների կողմից:

2021-22 ուստարվա 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննություններին և ստուգումներին չի մասնակցել 134 ուսանողողից 25, որից 18 ուսանող /4 անվճար/ հիվանդության պատճառով: Նշված 18 ուսանողի համար լուծարքային շրջանում լրացուցիչ կազմակերպվելու են ընթացիկ քննությունները: 15 ուսանող ընթացիկ քննություններից ունի 0 միավոր, որից 3 ուսանող 0 միավոր ստացել է 2 դասընթացից:

Դեկանի պաշտոնակատարը հաղորդեց, որ ֆակուլտետում ընթացիկ քննություններից միջին գնահատականը կազմել է «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 2,71 /3,90 անվճար համակարգում/, «Ֆինանսներ» ԿԾ՝ 2,31 /3,47 անվճար համակարգում/, իսկ ընթացիկ ստուգումներց միջին գնահատականը կազմել է «Զբոսաշրջություն» ԿԾ 5,42 /6,83 անվճար համակարգում/, «Ֆինանսներ» ԿԾ՝ 5,33 /6,92 անվճար համակարգում/:

Ընթացիկ քննություններից 4 և 5 միավոր ստացել են «Զբոսաշրջություն» ԿԾ 11 /միայն 5՝ 8 ուսանող/, «Ֆինանսներ» ԿԾ 14 ուսանող/միայն 5՝ 5 ուսանող/: Ընթացիկ ստուգումներից 9 և 10 միավոր ստացել են «Զբոսաշրջություն» ԿԾ 4 / միայն 10՝ 2 ուսանող/, «Ֆինանսներ» ԿԾ՝ 9 ուսանող / միայն 10՝ 1 ուսանող/:

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Ֆակուլտետի 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Լսեցին.- 2020-2021 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների բաշխված ցանկի հաստատման մասին /Զեկ Գ. Հովհաննիսյան, Մ. Միքայելյան/:

Գ. Հովհաննիսյանը և Մ. Միքայելյանը նշեցին, որ ամբիոնների նիստերում քննարկվել և ճշգրտվել են ինչպես առկա, այնպես հեռակա ուսուցմամբ ավարտական աշխատանքի թեմաները՝ հաշվի առնելով ուսանողների առաջարկությունները: Համաձայն անհատական ծանրաբեռնվածության «Ընդհանուր տնտեսագիտության» և «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնների նիստերում ըստ ղեկավարների և ուսանողների ավարտական աշխատանքների բաշխված ցուցակները քննարկվել և ներկայացվել է ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնն ավարտական աշխատանքների թեմաների ընտրության հարցում առաջնորդվել են իրենց կողմից որդեգրած քաղաքականությամբ: Մասնավորապես. ընտրվել են ավարտական աշխատանքների այնպիսի թեմաներ, որ ուսանողները հնարավորություն ունենան մարզի խնդիրների շուրջ իրականացնել համապարփակ հետազոտություն: Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ բաշխվել են առկա ուսուցմամբ վեց, իսկ հեռակա ուսուցմամբ տասներեք ուսանողի ավարտական աշխատանքների թեմաներ:

Մ. Միքայելյանը նշեց, որ և առկա, և հեռակա ուսուցմամբ ավարտական կուրսերում բաշխված են ավարտական աշխատանքի թեմաները: Նա նշեց, որ նախորդ տարի ամփոփիչ ատեստավորմանը հեռակա ուսուցմամբ չմասնակցած մեկ ուսանող

դիմել է այս տարի մասնակցության համար, կատարել է համապատասխան վճարումը և հրամանագրվել է, այդ ուսանողին ևս տրամադրվել է ավարտական թեմա: Մ. Միքայելյանը հաղորդեց, որ մասնաճյուղի շահառու կազմակերպություն՝ ԿԲ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը, որի հետ ունենք համագործակցության հուշագիր, առաջարկել է երեք ավարտական աշխատանք իրականացնել համատեղ ղեկավարմամբ: Նա նշեց, որ նման համատեղ աշխատանք առաջին անգամ է և կարծում է, որ այն կնպաստի փոխհամագործակցության խորացմանը և ավելի գործնական ավարտական աշխատանքների պատրաստմանը:

Արտահայտվեցին.- Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդն որոշեց.

Որոշեցին – Հաստատել «Ֆինանսներ», «Զբոսաշրջություն» /առկա, հեռակա/ մասնագիտությունների 2021- 2022 ուստարում նախատեսված ավարտական աշխատանքների ըստ ղեկավարների և ուսանողների բաշխված ցուցակները:

3. Լսեցին.- Հաղորդում 1-ին կիսամյակում նախատեսված հետազոտական աշխատանքների կատարման ընթացքի մասին /Զեկ Գ. Հովհաննիսյան, Մ. Միքայելյան/:

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ այս կիսամյակ Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնում հետազոտական բաղադրիչով դասընթացները երկուսն են, որոնք իրակացվում են Զբոսաշրջություն ԿԾ երրորդ կուրսում: Նախորդ տարվա փորձից ելնելով, կարելի է արձանագրել, որ այս տարի հետազոտական աշխատանքների հարցում փոքր-ինչ ուսանողները հմտացել են: Աշխատանքները վերահսկվում են ամբիոնի կողմից և ընթացքի մեջ են:

Մ. Միքայելյանը նշեց, որ այս կիսամյակ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի չորս դասընթացներում ներառված են հետազոտական բաղադրիչ՝ 2 դասընթաց Ֆինանսներ ԿԾ 3-րդ և 2 դասընթաց Ֆինանսներ ԿԾ 4-րդ կուրսերում: Մ. Միքայելյանը նշեց, որ հետազոտական բաղադրիչի ներդրումն արդյունավետ է և միտված է գլխավոր նպատակի իրականացմանը՝ ավարտական կուրսում ուսանողներին պատրաստել հետազոտական աշխատանք կատարելուն:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդն որոշեց.

Որոշեցին – Հաղորդում 1-ին կիսամյակում նախատեսված հետազոտական աշխատանքների կատարման ընթացքի մասին ընդունել ի գիտություն:

4. Լսեցին.- Ուսանողի կրթական կարիքների վերհանման հարցերով քննարկման մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց, որ տնտեսագիտության ֆակուլտետում աշխատակազմի բոլոր անդամների կողից խիստ ուշադրության կենտրոնում են պահվում ուսանողների կրթական կարիքները: Որոնք վեր են հանվում տարբեր մեխանիզմներով. հարցումներ, դիմում են ԿԾՊ-ներին, ամբիոն, դեկանատ, ուսանողական կառույցներին, դեկանին, դասախոսներին: Ֆակուլտետում ամրացրած է արձագանքման արկղ, որտեղ ուսանողները կարող են գցել իրենց առաջարկությունները: Վերհանված խնդիրները հիմնականում գտնում են իրենց լուծումները, չկարգավորման դեպքում մեկնաբանվում են պատճառները: Սակայն վերհանված այդ խնդիրները քիչ են արձանագրվում ամբիոններում և առաջարկում եմ ամբիոններում ԿԾՊ-ների պատասխանատվությամբ հավաքագրել վերհանված խնդիրները և լուծումները: Նշված գործընթացներում անպայման ընդգրկելով ուսանողական կառույցներին:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդն որոշեց.

Որոշեցին.- Ֆակուլտետի մասնագիտական ամբիոններում ԿԾՊ-ների պատասխանատվությամբ պահել էլ. մատիաներ վերհանված կրթական կարիքների և լուծումների գրանցումների համար:

5. Լսեցին.- Հաղորդում I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների և ժամանակացույցերի հաստատման մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հաղորդեց I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են կազմակերպել առկա ս/թ դեկտեմբերի 22-30 ընկած

ժամանակահատվածում: Կազմվել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ժամանակացույցերը ըստ կուրսերի և ըստ օրերի/ժամանակացույցերը կցվում են/: Համապատասխան մասնագիտական ամբիոնները նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետներում պահանջել են տոմսերը, թեստերի նմուշները:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաղորդումը I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին ընդունել ի գիտություն:
-Հավանություն տալ I կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցերին և ներկայացնել ՈՒՄՎ հաստատման:

6. Լսեցին.- Առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատման մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը ներկայացրեց 2021-22 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի նախագիծը, որը կազմվել է ՈՒՄՎ կողմից սահմանած ժամանակացույցին համապատասխան: Նա նշեց, որ բոլոր քննությունները կազմակերպվելու են առկա ձևով: Քննաշրջանի ժամանակացույցը հանաձայնեցվել է ուսանողների և դասախոսների հետ: Հաշվի է առնվել նաև դասընթացների բարդության աստիճանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Հավանություն տալ I կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցին և ներկայացնել ՈՒՄՎ հաստատման:

7.1. Լսեցին.- Հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների քննարկման մասին /Զեկ Գ. Հովհաննիսյան, Մ. Միքայելյան, Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ նշված հարցման արդյունքները ուսումնասիրվել են ամբիոնում և առանձնացվել են այն հարցերը, որոնց շուրջ խնդիրներ կան և դրանք կլինեն ամբիոնի ուշադրության կենտրոնում:

Ա. Ուլիխանյանը կարծիքով հարցումները ցույց են տալիս ուսանողներն արդեն ամբողջությամբ պատկերացնում են հետազոտական բաղադրիչի անհրաժեշտությունը: Եթե նախորդ տարի 57% էր կազմում ուսանողների բավարավածությունը, ապա այս տարի այն կազմում է մոտ 84%: Ուսանողները տեղին են համարում հետազոտական բաղադրիչի ներդրումը, քանի որ այն ամրապնդում են ստացած գիտելիքը:

Մ. Միքայելյանը նշեց, որ ընդհանուր առմամբ հետազոտական աշխատանքների վերաբերյալ բավարարվածությունն ուսանողների շրջանում գոհացնող են: Ամբիոնում քննարկվել և առանձնացվել են այն հարցերը, որոնք ունեն լրացուցիչ քննարկման անհրաժեշտություն: Այդ քննարկումներն ավելի արդյունավետ կլինեն ուսանողների մասնակցության պարագայում:

Զեկուցողները հանդես եկան առաջարկություններով, որոնք կներկայացրեցվեն ՄԿՈԱ բաժին:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.-Հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

-Գիտական խորհրդի կողմից կատարված առաջարկությունները ներկայացնել ՄԿՈԱ բաժին:

Խորհրդի նախագահ՝ ***Գ. Ավետիսյան***

Քարտուղար՝ ***Ա.Ալեքսանյան***